ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐԳԵԼՎԱԾ ՆՎԵՐՆԵՐԻ ԵՎ ՆՎԵՐՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ, ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
Մարտ, 2024թ.

Սույն փաստաթուղթը մշակվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ԻՀԱ) «ԲԿԳ ազգային գործողությունների ծրագրի բաց արդարադատության և հակակոռուպցիոն հանձնառությունների բազմակողմանի իրականացում (7. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստր և 9. «eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք)» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) աջակցությամբ՝ Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն բարեվարքության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակներում:

Սույն փաստաթղթում արտահայտված է հեղինակի՝ ԻՀԱ դիրքորոշումը, որի համընկնումը ԲԿԳ և ԵՄ դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Բովանդակություն

Հապավումներ 4

Ծանոթագրություն 5

I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ 6

Ա) Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) ստանդարտներ 6

Բ) ՏՀԶԿ-ի ստանդարտներ 13

Գ) Միջազգային փորձ 16

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՆՎԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 33

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 44

Ա) Արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի իրավասությունների վերաբերյալ եզրակացություններ 44

Բ) Արգելված նվերների իրավակարգավորումների վերաբերյալ վերապատրաստումների և հանրային իրազեկման վերաբերյալ եզրակացություններ 50

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 51

Ա) Արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանման իրավասությունների վերաբերյալ առաջարկություններ 51

Բ) Արգելված նվերների իրավակարգավորումների վերաբերյալ վերապատրաստումների և հանրային իրազեկման վերաբերյալ առաջարկություններ ..... **Error! Bookmark not defined.**

Հապավումներ

ԱլԳ	Արևելյան գործընկերություն
ԱԺ	Ազգային ժողով
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԳՐԵԿՈ	Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԻՎՕ	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանց

Ծանոթագրություն

Սույն փորձագիտական վերլուծության շրջանակներում կատարված վերլուծությունները վերաբերում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված արգելված նվերների կարգավորումներին և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնին: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների հանձնման, նվերների ռեեստրի, ինչպես նաև նվերների գնման վերաբերյալ միջազգային փորձի, ստանդարտների, օրենսդրության և պրակտիկայի վերլուծությունը ներկայացված է *Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների հանձնման և նվերների ռեեստրի միջազգային փորձի, օրենսդրության և պրակտիկայի փորձագիտական վերլուծության* շրջանակներում:

I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Միջազգային ստանդարտների և փորձի առումով՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները ընդհանուր առմամբ հետապնդում են նույն նպատակը: Այս տեսանկյունից ոլորտային բարեփոխումներ իրականացնող երկրների համար կարող է ուսուցանելի լինել Եվրոպական միության (ԵՄ) ստանդարտները, որոնք ներդրվում են ԵՄ անդամ պետություններում, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի (ՏՀԶԿ) և Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) ստանդարտները, առանձին երկրների փորձը, որոնք իրենց ազգային համատեքստից, առանձնահատկություններից, ավանդույթներից և իրավական շրջանակից ելնելով մշակել են իրենց հատուկ իրավակարգավորումներ, դրանցից բխող կառուցակարգեր և գործիքներ:

Այս կապակցությամբ, սույն վերլուծության շրջանակներում ուսումնասիրության է ենթարկվել տարբեր երկրների, այդ թվում՝ ԵՄ անդամ երկրների, ԱլԳ երկրների (մասնավորապես՝ Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա), առաջավոր փորձ ունեցող երկրների պրակտիկան, ինչպես նաև հակակոռուպցիոն ոլորտում մասնագիտացված միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտները՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի վերաբերյալ՝ անցկացնելով համեմատականներ հայաստանյան օրենսդրության և պրակտիկայի միջև:

Ա) Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) ստանդարտներ

1) Հայաստանի Հանրապետությանը (ՀՀ) տրված հանձնարարականները

Հայաստանը 2004 թվականից անդամակցում է Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբին (ԳՐԵԿՈ) և ենթարկվում է կանոնավոր գնահատման, որի նպատակն է պարզել անդամ պետության տարվող հակակոռուպցիոն քաղաքականության

և դրա կիրարկման համապատասխանությունը կազմակերպության հակակոռուպցիոն չափորոշիչներին: 2021 թվականի սեպտեմբերի 21-ին հրապարակվել է Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցը (հիշատակվում է նաև որպես՝ չորրորդ փուլի համապատասխանության զեկույց), որը վերաբերում էր պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը[1]: Հայաստանի համար ձևակերպված 18 հանձնարարականներից 3-ը վերաբերել են նշված երեք սուբյեկտային խմբերի շրջանում էթիկայի, բարեվարքության, շահերի բախման և նվերների ընդունման կարգավորումներին:

Մասնավորապես, զեկույցում անդրադառնալով հանրային պաշտող զբաղեցնող անձանց կողմից նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ գործող կարգավորումներին՝ ԳՐԵԿՈ-ն նշել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված նվերների վերաբերյալ կանոնները, որոնք վերաբերում են ինչպես խորհրդարանի անդամներին, այնպես էլ այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին, վերանայման կարիք ունեն:

Այդ հանձնարարականներն են.

Հանձնարարական ii.

*13. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով **հստակ ուղղորդում կապահովվի** շահերի բախման և հարակից ոլորտներին, մասնավորապես՝ **նվերների և այլ առավելությունների ընդունմանը,** անհամատեղելիության դեպքերին և լրացուցիչ գործունեությանը, ֆինանսական շահերին, տեղեկատվության և պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործմանը և երրորդ կողմերի, օրինակ՝ լոբբիստների հետ շփումներին առնչվող հարցերում, ii) այն լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝ **մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն և իրազեկվածության մակարդակի բարձրացում:***

[1] Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցը՝ պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ: Հրապարակվել է 2021 թվականի սեպտեմբերի 21-ին: Հասանելի է՝ https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad

Չորրորդ փուլի համապատասխանության զեկույցով ԳՐԵԿՈ-ն այս հանձնարարականը գնահատվել է որպես **«մասամբ իրականացված»**[2] և վերահաստատել, որ Հանձնարարականի (i) մասի վերաբերյալ պատգամավորների վարքագծի կանոնագիրք, որը կներառեր համապատասխան ուղեցույցներ շահերի բախման և բարեվարքության վերաբերյալ, դեռևս առկա չէ: Հանձնարարականի (ii) մասի վերաբերյալ ընդգծել է, որ համակարգված և խորացված ուսուցում, ինչպես նաև խորհրդատվություն Կանոնագրքի վերաբերյալ չի ներդրվել:

Հանձնարարական iv.

*29. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է պատգամավորների կողմից էթիկայի և վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգը զգալիորեն ամրապնդել՝ ապահովելու համար՝ i) էթիկայի կանոնների և անհամատեղելիության դեպքերի ու լրացուցիչ գործունեության, շահերի բախման և **նվերների ընդունման** վերաբերյալ կանոնների **անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողությունը**, ii) համապատասխան **պատասխանատվության ենթարկելու միջոցով կանոնների կատարումը**:*

Չորրորդ փուլի համապատասխանության զեկույցով այս հանձնարարականը գնահատվել է որպես **«մասամբ իրականացված»**[3]:

Հանձնարարական xvi.

*62. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է հետագայում մշակել պատգամավորների, դատավորների և դատախազների կողմից **նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ**, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի **հստակ սահմանումներ**, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում՝ նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերների մասին:*

---

[2] Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 76:

[3] Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցը՝ պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ: Հրապարակվել է 2021 թվականի սեպտեմբերի 21-ին: Պարագրաֆ 76:

Չորրորդ փուլի համապատասխանության զեկույցով այս հանձնարարականը գնահատվել է որպես **«մասամբ իրականացված»**[4]:

Միաժամանակ հարկ է նշել, որ 2024 թվականի մարտի 18 - 22-ը տեղի է ունեցել ԳՐԵԿՈ-ի 96-րդ լիագումար նիստը, որի շրջանակներում հաստատվել է Հայաստանի վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի զեկույցը[5]: Գնահատման այս փուլը վերաբերում է «Կոռուպցիայի կանխարգելմանը և բարեվարքության խթանմանը բարձրագույն գործադիր և իրավապահ մարմիններում»: Սույն վերլուծության կատարման ընթացքում գնահատման 5-րդ փուլի զեկույցը դեռևս հրապարակված չէր, ուստի դրան անդրադարձ չի կատարվել[6]:

Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին **ԳՐԵԿՈ-ի՝ Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույցով**, որը **հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 25-ին**, ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ներդնել շահերի բախման և հարակից ոլորտներին, մասնավորապես՝ **նվերների և այլ առավելությունների ընդունմանը,** անհամատեղելիության դեպքերին և լրացուցիչ գործունեությանը, ֆինանսական շահերին, տեղեկատվության և պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործմանը և երրորդ կողմերի, օրինակ՝ լոբբիստների հետ շփումներին առնչվող հարցերում ներդնել այնպիսին գործնական միջոցներ, ինչպիսիք են օրինակ՝ **մասնագիտական վերապատրաստումը, խորհրդատվությունը և իրազեկվածության մակարդակի բարձրացումը**[7]:

---

[4] Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցը՝ պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ: Հրապարակվել է 2021 թվականի սեպտեմբերի 21-ին: Պարագրաֆ 76:

[5] Հաստատվել է Հայաստանի վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի զեկույցի հաստատման վերաբերյալ հաղորդագրությունը: Հասանելի է՝ https://www.coe.int/en/web/greco/-/greco-96th-plenary-meeting-18-22-march-2024- https://iravaban.net/468006.html

[6] ՀՀ արդարադատության նախարարության հրապարակումը՝ ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի զեկույցի հաստատման վերաբերյալ: Հասանելի է՝ https://www.facebook.com/mojofarmenia/posts/pfbid02k5BSKQkbbXNTJNX6fcDvcyG1RnA6328ZkMPfcpwu8V4Gb1dmNE4W3vaGCE1Y69rxl

[7] Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին ԳՐԵԿՈ-ի՝ Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույց: Հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 25-ին: Պարագրաֆներ 223 (ii): Հասանելի է՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8

2) ԳՐԵԿՈ-ի կողմից ընդունված ստանդարտները

2019 թվականի մարտի 20-ին ԳՐԵԿՈ-ի կողմից հրապարակված «Պետական պաշտոնյաների վարքագծի կանոններ. ԳՐԵԿՈ եզրահանգումներն ու առաջարկությունները» վերտառությամբ փաստաթղթում ԳՐԵԿՈ-ն ներկայացրել է իր գործունեության ընթացքում ներդրած ստանդարտները, դրանց հիման վրա պետություններն արված առաջարկությունները և գրանցած հաջողված և չհաջողված փորձերը: Դրանց շրջանակներում, ԳՐԵԿՈ-ն հղում անելով թիվ R (2000) 10 հանձնարարականի 18-րդ հոդվածին, ընդգծել է, որ **պետական պաշտոնյաները չպետք է պահանջեն կամ ընդունեն որևէ նվեր հօգուտ իրենց կամ որևէ այլ անձի**, որը կարող է ազդել կամ ենթադրաբար ընկալվել որպես ազդեցություն՝ իրենց պարտականությունների կատարման անաչառության վրա կամ կարող է համարվել կամ թվալ իբրև **պարգև**՝ կապված իր պարտականությունների կատարման հետ:

Վերը նշվածի **հիմնական գաղափարն այն է**, որ **ցանկացած նվեր կամ արտոնություն (օգուտ)** կարող է նվազեցնել քաղաքացիների վստահությունը պետական կառավարման համակարգի արդարության նկատմամբ, քանի որ քաղաքացիները կարող են այն ընկալել պետական պաշտոնյայի կողմից փոխհատուցման ստացում մասնավոր անձանցից՝ իր պարտականությունների կատարման դիմաց:

Այս տեսանկյունից, ԳՐԵԿՈ-ն վերջերս վերահաստատել է իր դիրքորոշումը *«նվերների վերաբերյալ հետևողական և ամուր շրջանակ ունենալու կարևորության վերաբերյալ, որը ոչ միայն կկանխի որոշակի իրավիճակները կոռուպցիոն հարաբերությունների վերածվելուց, այլև կպաշտպանի համապատասխան պետական պաշտոն զբաղեցնողի անկողմնակալությունը, ինչպես նաև ինստիտուցիոնալ հեղինակությունը»*[8]:

Այս կապակցությամբ գնահատման թիմերը ընդգծել են այն, ինչ վերջիններս համարում են մի շարք անդամ պետությունների լավագույն փորձ, այն է՝ *«ընտրել են արգելքի սկզբունք, որը հաճախ կապված է անթույլատրելի նվերները (առավելությունները, օգուտները) վերադարձնելու պարտավորության հետ, բացառությամբ այն նվերների, որոնք տրվել են քաղաքավարության շրջանակներում, ինչպես նաև կապված են*

[8] «Պետական պաշտոնյաների վարքագծի կանոններ. ԳՐԵԿՈ եզրահանգումներն ու առաջարկությունները»: Հրապարակվել է ԳՐԵԿՈ-ի կողմից 2019 թվականի մարտի 20-ին: Էջեր 16-17: Հասանելի է՝ https://rm.coe.int/codes-of-conduct-for-public-officials-greco-findings-recommendations-p/168094256b

հայտարարագրման ենթակա նվերների (առավելությունների, օգուտների) այն մի քանի կատեգորիաների հետ, որոնք համարվում են թույլատրելի (հրավերներ, հյուրասիրություն, ներկայացուցչական նվերներ և այլ իրեր, որոնք դառնում են Խորհրդարանի սեփականությունը)»:

Նույն փաստաթղթի շրջանակներում, ԳՐԵԿՈ-ն ընդգծել է այն կարևոր հանգամանքը, որ հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը մեծապես կախված է վերապատրաստրումներից և հանրային իրազեկումից: Հիշյալը ընդգծել է մի քանի գործոններով: Դրանք են՝

- այն անձանց իրազեկվածությունը, որոնց հասցեագրված է հակակոռուպցիոն քաղաքականությունը, ինչպես նաև դրանում տեղ գտած դրույթներին այդ անձանց կողմից համապատասխան գործելու պատրաստակամությունը, կամքը,
- բոլոր մակարդակներում պետական պաշտոնյաների համապատասխան վերապատրաստում իրականացնելը՝ նախնական և շարունակական հիմունքներով, հնարավորության դեպքում օգտագործելով կոնկրետ օրինակներ: Մասնավորապես՝ խորհուրդ է տրվում իրականացնել հանրային էթիկայի և կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ ուսուցումներ, ներառյալ՝ գործնական խնդիրների և իրավիճակային դեպքերի լուծում: Օրինակ՝ նվեր ստանալու դեպքում պատշաճ և իրավաչափ վարքագիծը, շահերի բախումը և այլն[9]:

Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին ԳՐԵԿՈ-ի՝ <u>Վրաստանի</u> վերաբերյալ չորրորդ փուլի գնահատման զեկույցով[10], որը հրապարակվել է 2017 թվականի հունվարի 17-ին, ԳՐԵԿՈ-ն ընդգծել է, որ Խորհրդարանի անդամների վրա նույնպես կիրառվում են պաշտոնատար անձանց էթիկայի ընդհանուր կանոնները, որոնք նախատեսված են «Պետական կառույցներում շահերի բախման և կոռուպցիայի մասին» օրենքում: Վերջինս փոփոխվել է 2015 թվականի

---

[9] «Պետական պաշտոնյաների վարքագծի կանոններ. ԳՐԵԿՈ եզրահանգումներն ու առաջարկությունները»: Հրապարակվել է ԳՐԵԿՈ-ի կողմից 2019 թվականի մարտի 20-ին: էջ 7:

[10] Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին ԳՐԵԿՈ-ի՝ Վրաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույց: Պարագրաֆ 38: Հասանելի է՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806dc116

հոկտեմբերի 27-ի թիվ 4358 օրենքով, ի թիվս այլոց, նոր գլխում ներառելով պետական ծառայողների վարքագծի ընդհանուր կանոնները: Նոր դրույթներն ուժի մեջ են մտնելու 2017 թվականի հունվարի 1-ից: Որպես օրենսդրական դրույթների լրացում, Քաղաքացիական ծառայության բյուրոն, որը համարվում է «Պետական կառույցներում շահերի բախման և կոռուպցիայի մասին» օրենքի կատարման համար պատասխանատու իրավաբանական անձը, մշակել է բավականին ծավալուն փաստաթուղթ՝ «Քաղաքացիական ծառայողների էթիկան և վարքագծի կանոնները» վերտառությամբ: Այն ներառում է ***մի շարք իրավիճակային և իրական դեպքերի ուսումնասիրություններ***, որոնցով ***ուղեցույց է տրամադրում էթիկական հարցերում***: ԳՐԵԿՈ-ի գնահատման թիմի կարծիքով՝ այս փաստաթուղթը ***արդյունավետ գործիք է***, որի հիմքում ***դրված գործնական մոտեցումը*** ողջունելի է:

Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին ԳՐԵԿՈ-ի՝ Դանիայի վերաբերյալ չորրորդ փուլի գնահատման զեկույցով[11], որը հրապարակվել է 2014 թվականի ապրիլի 16-ին, ԳՐԵԿՈ-ն ողջունել է այն մոտեցումը, որ ի հավելումն վարքագծի կանոնագրքով նախատեսված ուղեցույցին, լրացուցիչ միջոցներ կձեռնարկվեն վարքագծի կանոնների և կանոնագրքի ընդհանուր կարգավորումների վերաբերյալ ***խորացված ուսուցումներ*** և ***կոնֆիդենցիալ խորհրդատվության տրամադրելու*** ուղղությամբ: Համաձայն Կոռուպցիայի դեմ պայքարի քսան առաջնորդող սկզբունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (97) 24 բանաձևի 15-րդ սկզբունքի[12], ԳՐԵԿՈ-ն առաջարկում է (i) ***ընդունել և հանրությանը հասանելի դարձնել*** խորհրդարանի անդամների վարքագծի կանոններ, ներառելով, *ի թիվս այլոց,* շահերի բախման կանխարգելման, ***նվերների և այլ առավելությունների հետ կապված հարցերի*** և խորհրդարանի անդամների աշխատանքի վրա ոչ պատշաճ ազդեցություն ունեցող երրորդ անձանց հետ վարվելակերպի վերաբերյալ

---

[11] Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին ԳՐԵԿՈ-ի՝ Դանիայի վերաբերյալ չորրորդ փուլի գնահատման զեկույց: Պարագրաֆ 40: Հասանելի է՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c323e

[12] Կոռուպցիայի դեմ պայքարի քսան առաջնորդող սկզբունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (97) 24 բանաձև: Հասանելի է՝ https://polis.osce.org/council-europe-resolution-97-24-twenty-guiding-principles-fight-against-corruption

ուղեցույցներ, (ii) դրանցում սահմանել կիրառման համար նախատեսված գործնական միջոցներ, ինչպիսիք են՝ հատուկ ***մասնագիտացված ուսուցումը կամ խորհրդատվությունը***:

Բ) ՏՀԶԿ-ի ստանդարտներ

1. ***ՀՀ-ին տրված հանձնարարականները***

ՏՀԶԿ (2024) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների մոնիտորինգի հինգերորդ փուլի ելակետային զեկույցի *հենանիշ 2.2.1-ը* վերաբերում է հետևյալին. *«Պետական պաշտոնյաների (հանրային ծառայողների) նկատմամբ պարբերաբար կիրառվում են պատասխանատվության միջոցներ հետևյալ խախտումների համար. (C). Նվերների կամ հյուրասիրության (հյուրընկալության) հետ կապված սահմանափակումների խախտում»*[13]: Այս գործողությունը ՏՀԶԿ-ն գնահատել է անհամապատասխան: ՏՀԶԿ-ն ընդգծել է, որ նվերների ռեեստր ստեղծելու վերաբերյալ կատարած փոփոխությունները («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 29 և 30) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում (ՎԻՎՕ) կատարված փոփոխությունները, որոնք նախատեսում են **նվերների ընդունման կանոնների** կամ դրանց հաշվառման կարգի խախտման համար **վարչական պատասխանատվության միջոցներ** (հոդված 166.1) ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարից: Հետևապես, 2022 թվականին նվերների կամ հյուրընկալության հետ կապված խախտումների համար պատասխանատվության միջոցներ չեն եղել, ինչպես պահանջում է *(C)* կետը[14]:

Նույն զեկույցի *հենանիշ 2.2.2-ը* վերաբերում է հետևյալին. *«Բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձանց (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց) նկատմամբ պարբերաբար կիրառվում են պատասխանատվության միջոցներ հետևյալ խախտումների համար. (B). Նվերների կամ հյուրասիրության (հյուրընկալության) հետ կապված սահմանափակումների խախտում»*[15]: Այս հանձնառությունը ՏՀԶԿ-ն գնահատել է

---

[13] ՏՀԶԿ (2024) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների մոնիտորինգի հինգերորդ փուլի ելակետային զեկույց: Հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/fb158bf9-en.pdf?expires=1711347233&id=id&accname=guest&checksum=95BACA2F2F5C8207CF26901894FA5F53

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 40

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 41

անհամապատասխան և ապա հավելել՝ .. Բացի այդ, նվերների արգելքի վերաբերյալ իշխանությունները նշել են, որ 2022 թվականին, օրենսդրական բացերի պատճառով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) չի կարողացել արդյունավետորեն արձագանքել նվերներ ընդունելու **սահմանափակումների խախտումներին կամ կիրառել համապատասխան պատժամիջոցներ**: Իսկ 2023 թվականին ԿԿՀ-ն երեք վարչական վարույթ է իրականացրել՝ նվերներ ընդունելու **սահմանափակումները խախտելու համար**[16]:

Նույն զեկույցի *հենանիշ 2.2.3-ը սահմանել է «Հետևյալ միջոցառումները պարբերաբար կիրառվում են (B). Ոչ օրինական նվերների կամ նրանց արժեքի բռնագանձում»:* ՏՀԶԿ-ը գործողությունը գնահատել է անհամապատասխան և արձանագրել, որ հաշվետու ժամանակահատվածում 2.2.3-ի հենանիշին համապատասխան 2022 թվականին ոչ օրինական նվերների կամ դրանց արժեքի բռնագանձման վերաբերյալ միջոցներ չեն կիրառվել:

2. *ՏՀԶԿ-ի կողմից ընդունված ստանդարտները*

ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի գնահատման շրջանակի *«Շահերի բախման կարգավորումները պատշաճ կերպով կիրարկվում են»* 3-րդ ինդիկատորի՝ 2.1-ի (C) հենանիշը սահմանում է հետևյալ պահանջը. *«2.1. Պետական պաշտոնյաների նկատմամբ պարբերաբար պատժամիջոցներ են կիրառվում հետևյալ խախտումների համար. (C)* ***Նվերների կամ հյուրընկալության հետ կապված սահմանափակումների խախտում»*** [17]: Նույն ինդիկատորի 2.1-ի (B) հենանիշը սահմանում է հետևյալ պահանջը *«2.1. Հետևյալ* ***միջոցները*** *պարբերաբար կիրառվում են. (B)* ***Ոչ օրինական նվերի կամ դրա արժեքի բռնագրավում»***[18]:

ՏՀԶԿ-ը «**ոչ օրինական նվեր**» եզրույթը մեկնաբանել է որպես նվերներ, որոնք արգելված կամ սահմանափակված են օրենքով, և ընդունվում են պետական

---

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 42

[17] ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, մոնիթորինգի 5-ի փուլ: Գնահատման շրջանակ: Էջ 31: Հասանելի է՝ https://www.oecd.org/investment/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Assessment-Framework-ENG.pdf

[18] Տե՛ս նույն տեղում:

պաշտոնյաների կողմից: Իսկ «**բռնագրավումը**» կարող է լինել ցանկացած տեսակի (օրինակ՝ քրեական, վարչական կամ քաղաքացիական)[19]: Նշելով «պարբերաբար», ՏՀԶԿ-ը այն մեկնաբանել է հետևյալ կերպ. **«Կիրառվում կամ օգտագործվում է համակարգված, որպես սովորական պրակտիկա: Կիրառումը կամ օգտագործումը համակարգված է, երբ այն ներառում է տարեկան առնվազն 3 դեպք»**[20]:

> *Միջազգային ստանդարտներով տարբերակվում են բուն իրավիճակային (ad hoc) շահերի բախման կանխարգելման և կառավարման կառուցակարգեր, ինչպես նաև շահերի բախմանն առնչվող այլ սահմանափակումներ՝ նվերների ընդունման սահմանափակումները, անհամատեղելիության պահանջները, մասնավորապես՝ ՏՀԶԿ-ի կողմից շեշտադրվում է սեփականության իրավունքից հրաժարվելու պահանջը՝ մասնագիտացված կառույցներին հավատարմագրային կառավարման հանձնելու եղանակով, և հետաշխատանքային սահմանափակումները, որի նպատակն է կանխել «պտտվող դռների» (revolving door) կոռուպցիոն սխեմաներում հայտնվելու իրավիճակները:*

Իր հերթին, նվերները կարող են ներկայացվել կա՛մ որպես եկամտի մաս, կա՛մ որպես առանձին հայտարարագրման ենթակա գույք: Եթե նվերը ներկայացված է որպես եկամտի մաս, ապա դրա ներկայացման ձևից պետք է հստակ պարզ լինի, որ այն նվեր է: Նվերը պետք է լայնորեն ընկալվի որպես ցանկացած նյութական կամ ոչ նյութական գույք կամ օգուտ, որը ստացվել է անվճար կամ շուկայական նվազագույն գնից ցածր, ներառյալ բնաիրային նվերները, հայտարարատուին կամ նրա ընտանիքի անդամին մատուցված

---

[19] ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր. Ուղեցույց: էջ 22: Հասանելի է՝ https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Guide-ENG.pdf

[20] ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, մոնիթորինգի 5-ի փուլ: Գնահատման շրջանակ: էջ 26: Հասանելի է՝ https://www.oecd.org/investment/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Assessment-Framework-ENG.pdf

ծառայությունների վճարումը (օրինակ՝ հովանավորված ճանապարհորդություն, կացարան, առողջապահություն, կրթություն և այլն)[21]:

Գ) Միջազգային փորձ

ՄՈԼԴՈՎԱ

Մոլդովայի Հանրապետության կառավարությունը 2020 թվականի փետրվարի 26-ին ընդունել է Նվերների իրավական ռեժիմի մասին թիվ 116 հրամանը[22]: Հրամանի ընդունման համար հիմք են հանդիսացել «Բարեվարքության մասին» թիվ 82/2017 օրենքի 16-րդ հոդվածը և «Կառավարության ծառայողի վարքագծի կանոնների» մասին թիվ 25/2008 օրենքի 11-րդ հոդվածը:

Համաձայն հրամանի՝ քաղաքավարության կամ հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ստացված նվերների թույլատրելի արժեքը սահմանվել է առավելագույնը 1000 մոլդովական լեյ մեկ օրացուցային տարվա ընթացքում: Հրամանով հաստատվել է նաև նվերների իրավական ռեժիմի կանոնակարգը, որով սահմանվել են նվերների գնահատման և հաշվառման հանձնաժողովի գործունեության կարգը, ինչպես նաև քաղաքավարության կամ հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ստացված նվերների (այսուհետ՝ թույլատրելի նվերներ) հաշվարկումը, գնահատումը, պահպանումը, օգտագործումը և ստացված նվերների ետգնումը, ինչպես նաև պետական գործիչներին առաջարկվող արգելված նվերների շրջանակը՝ «Բարեվարքության մասին» 82/2017 օրենքի 3-րդ հոդվածի մասով: Հրամանի շրջանակներում տրված են նաև մի քանի եզրույթների իմաստներ, ըստ այդմ՝

- **Նվերներ են** համարվում այն առարկաները (նյութական և ոչ նյութական), ծառայությունները, արտոնությունները, առաջարկները կամ ցանկացած այլ արտոնություն, որոնք առաջարկվում են պետական գործիչներին ծառայողականպարտավորությունների կատարման դիմաց:

---

[21] ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր. Ուղեցույց: էջ 24: Հասանելի է՝ https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Guide-ENG.pdf

[22] Նվերների իրավական ռեժիմի մասին Մոլդովայի Հանրապետության կառավարությունը 2020 թվականի փետրվարի 26-ի թիվ 116 հրաման: Հասանելի է՝ https://cis-legislation.com/document.fwx?rgn=123971

- **Թույլատրելի նվերներն են** քաղաքավարության կամ հյուրընկալության միջոցառումների շրջանակներում առաջարկվող նվերներ, ներառյալ՝ տարեդարձի (տարելիցի) և հիշատակի մետաղադրամները։
- **Անթույլատրելի (արգելված) նվերներ են** համարվում առարկաները, ծառայությունները, արտոնությունները, առաջարկները, որոնք նախատեսված են պետական գործիչների կամ նրանց ընտանիքի անդամների համար, եթե դրանց տրամադրումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է իրենց ծառայողական գործունեության իրականացման հետ։
- **Քաղաքավարության շրջանակներում ստացված նվերներ են** համարվում նրանք, որոնք ստացվել են անձնական/մասնագիտական/ազգային տոների/ գործողությունների համատեքստում՝ ի նշան երախտիքի, և որոնք չեն ազդում և չեն կարող ընկալվել որպես ազդող հանգամանք աշխատանքային (ծառայողական) պարտականությունների անաչառ կատարման վրա։
- **Հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ստացված նվերներն են** առարկաները, ներառյալ՝ շուտ փչացող ապրանքները, որոնք սովորաբար առաջարկվում են պաշտոնական պատվիրակությունների ներկայացուցիչներին կամ ներկայացվում այլ հանրային սուբյեկտի, համայնքի կամ օտարերկրյա կառավարության ներկայացուցիչներին։

Հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ստացված նվերները հանրային սուբյեկտի (պետական կարգավիճակ ունեցող մարմնի) անունից ընդունվում են այն հանրային սուբյեկտի պաշտոնյաների կողմից։ Հյուրընկալության միջոցառումների շրջանակներում առաջարկվող **նվերների ստացումը գրանցվում է թույլատրելի նվերների հաշվառման գրանցամատյանում**։ Ընդ որում, հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ներկայացած **նվերը համարվում է հանրային սուբյեկտի սեփականություն**՝ անկախ դրա արժեքից։

Թույլատրելի նվերները, որոնք ներառում են սպորտային, մշակութային կամ հանրային միջոցառումների համար արտոնյալ հրավերներ/տոմսեր, հոգում են

տրանսպորտի, կացարանի և օրապահիկի ծախսեր, տրամադրում են զեղչեր, արտոնություններ և հավատարմության ծրագրեր, բացառությամբ այն դեպքերի, երբ արտոնությունների կամ զեղչերի տեսքով ստացված նվերները տրամադրվել են լայն հանրությանը, ինչպես նաև հանրային սուբյեկտին առաջարկվող ցանկացած այլ արտոնություն կամ առավելություն **ենթակա են հայտարարագրման, գնահատման և հաշվառման:**

Մոլդովայի «Բարեվարքության մասին» թիվ 82/2017 օրենքը կարգավորում է նվերների ընդունման իրավահարաբերությունները[23]:

Ըստ այդմ՝ հանրային պաշտոնյաների գործունեության ընթացքում կոռուպցիոն դրսևորումների առաջացումից խուսափելու նպատակով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է **խնդրել կամ ընդունել** այնպիսի նվերներ (ապրանքներ, ծառայություններ, արտոնություններ, հրավերներ կամ այլ առավելություններ), որոնք նախատեսված են իրենց կամ իրենց ընտանիքի անդամների օգտագործման կամ տնօրինման համար, եթե նման **նվերների առաջարկը կամ տրամադրումը ուղղակիորեն կամ անուղղակի կապված է նրանց ծառայողական գործունեության իրականացման հետ**: Սրանք համարվում են **անթույլատրելի նվերներ:**

Անթույլատրելի նվերներ տրամադրելու խնդրանքը կամ ընդունումը կարող է դիտարկվել կոռուպցիոն վարքագիծ՝ համաձայն քրեական օրենսդրության և քննարկվող օրենքի VI գլխի դրույթների: Վերը նշված **արգելքը չի տարածվում այն նվերների վրա**, որոնք տրամադրվել են **քաղաքավարության շրջանակներում** կամ ստացվել են որոշակի **ներկայացուցչական գործողությունների** կապակցությամբ: Սրանք համարվում են **թույլատրելի նվերներ**: Միաժամանակ, **թույլատրելի նվերներ չեն համարվում** շրջանառության մեջ գտնվող ազգային կամ արտարժույթով դրամական միջոցները, **բացառությամբ** հոբելյանական մետաղադրամների կամ հուշադրամների: Բոլոր թույլատրելի նվերները հայտարարագրվում և գրանցվում են յուրաքանչյուր պետական մարմնում վարվող հանրային գրանցամատյանում: Հանրային գրանցամատյանում նվերների հաշվառման, պահման, գնահատման կարգը նախատեսված է «Նվերների

[23] Մոլդովայի «Բարեվարքության մասին» թիվ 82/2017 օրենք, հոդված 16: Հասանելի է՝ https://vetting.md/wp-content/uploads/2022/10/Law-No.-82-on-integrity.pdf

իրավական ռեժիմի մասին» Մոլդովայի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 26-ի թիվ 116 հրամանով[24]:

Եթե հանրային պաշտոնային առաջարկվում է անթույլատրելի նվեր, վերջինս պարտավոր է ձեռնարկել հետևյալ գործողությունները.

1) հրաժարվել նվերից,
2) հնարավորության դեպքում, պարտադիր կերպով հրավիրել վկաներ, որոնք կարող են լինել գործընկերների շրջանից,
3) այդ իրավիճակի/փորձի մասին անհապաղ զեկուցել պատասխանատու հակակոռուպցիոն գործակալությանը,
4) հայտնել պետական մարմնի (հանրային սուբյեկտին) ղեկավարին,
5) նվերը փոխանցել հանրային սուբյեկտի ղեկավարին, երբ նվերն առաջարկվել է հանրային պաշտոնյային՝ առանց իր իմացության (օրինակ՝ թողնվել է աշխատավայրում նրա բացակայության դեպքում),
6) պատշաճ կերպով իրականացնել ծառայողական գործունեությունը, հատկապես այն գործունեությունը, որի դիմաց նրան առաջարկվել է նվերը:

Եթե պետական պաշտոնյային առաջարկվում է թույլատրելի նվեր, վերջինս պարտավոր է ձեռնարկել հետևյալ գործողությունները.

1) նվերը հանձնել հանրային սուբյեկտի նվերների հաշվառման և գնահատման հանձնաժողովին՝ այն ստանալուց հետո կամ գործուղումից վերադառնալու պահից (եթե պաշտոնյային նվերը փոխանցվել է այն ժամանակահատվածում, երբ վերջինս գտնվել է գործուղման մեջ) 3 օրվա ընթացքում,
2) հայտնել այն հանգամանքները, որպիսի պայմաններում նրան առաջարկվել է նվերը՝ պարզաբանելով այն պահելու կամ պետական մարմնին հանձնելու մտադրության մասին.

[24] Նվերների իրավական ռեժիմի մասին Մոլդովայի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 26-ի թիվ 116 հրաման: Հասանելի է՝ https://cis-legislation.com/document.fwx?rgn=123971

3) գնել նվերը, եթե որոշել է այն պահել՝ պետական կազմակերպության բյուջե վճարելով նվերների հաշվառման և գնահատման հանձնաժողովի կողմից գնահատված նվերի արժեքի և սահմանված թույլատրելի շեմի տարբերությունը։

Պետական մարմնի (հանրային սուբյեկտի) ղեկավարը **նվերների պահպանման հետ** կապված ունի հետևյալ պարտականությունները.

1) ընդունել իրավական ակտ՝ հանրային սուբյեկտում նվերների պահպանման հետ կապված կանոններ սահմանելու վերաբերյալ,
2) նշանակել նվերների հաշվառման և գնահատման հանձնաժողովի անդամներին և ապահովել նրանց գործունեության համար անհրաժեշտ պայմանները,
3) ապահովել հանրային պաշտոնյաների կողմից ստացված բոլոր նվերների գրանցումը հատուկ գրանցամատյանում, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով, նշելով նվերների նկարագրությունը, թույլատրելի կամ անթույլատրելի լինելու դասակարգումը, հանգամանքները, որում նվերը հանձնվել է։ Թույլատրելի նվերների դեպքում նշվում է նաև գնահատող հանձնաժողովի կողմից նվերի գնահատված արժեքը, և կատարվում է նշում պետական մարմնի ադմինիստրացիա ուղարկելու կամ, ըստ իրավիճակի՝ հանրային պաշտոնային վերադարձնելու մասին՝ գնման գործընթացի տեղեկությունները։ Անթույլատրելի նվերների դեպքում նշվում են դրանց փոխանցման մասին տվյալները՝ որպես ապացույց կցելով փոխանցման մասին պատասխանատու հակակոռուպցիոն մարմնին ուղարկված ծանուցումը,
4) ապահովել պետական մարմնի բյուջե նվերի հետգնումից գումարների մուտքագրումը,
5) պատասխանատու հակակոռուպցիոն մարմնին հանձնել իրեն հանձնված անթույլատրելի նվերը,
6) ապահովել այն հանրային պաշտոնյաների ծառայողական գործունեության պատշաճ կատարումը, որոնց առաջարկվել են անթույլատրելի նվերներ,

7) ապահովել նվերների հաշվառման հատուկ գրանցամատյանի հրապարակումը հանրային սուբյեկտի ինտերնետային էջում.
8) կարգապահական պատասխանատվության ենթարկել իր ղեկավարած հանրային սուբյեկտում նվերների կարգավորումները խախտած հանրային պաշտոնյաներին:

ԼԱՏՎԻԱ

Լատվիայում պաշտոնատար անձանց նվերների ընդունման և հանձնման կարգը նախատեսված է Կոռուպցիայի կանխարգելման մասին օրենքով[25]:

Պաշտոնական պարտականությունները կատարելիս պետական պաշտոնյային **արգելվում է ընդունել նվեր կամ այլ նյութական օգուտ, բացառությամբ** ստորև նախատեսված դեպքերի:

Պաշտոնական պարտականությունները կատարելիս պաշտոնատար անձին **թույլատրվում է ընդունել միայն դիվանագիտական նվերներ**, ինչպես նաև այն նվերները, **որոնք տրվում են պաշտոնատար անձին՝**

- օտարերկրյա պետություններում պաշտոնական կամ աշխատանքային այցերի ընթացքում,
- Լատվիայի Հանրապետության ազգային տոներին և հիշատակի օրերին,
- պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ձեռնարկության (ընկերության) տարեդարձի օրը, որտեղ պաշտոնյան աշխատում է,
- օրենքներով նախատեսված կամ Կառավարության կողմից սահմանված այլ դեպքերում:

Նշված օրենքի իմաստով դիվանագիտական նվերներն այն նվերներն են, որոնք օտարերկրյա պաշտոնյաները տալիս են նախագահին, Սեյմի[26] նախագահին, վարչապետին, արտաքին գործերի նախարարին և Արտաքին գործերի նախարարության այլ պաշտոնյաների՝ պետական, պաշտոնական կամ աշխատանքային այցերի ընթացքում՝

[25] «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Լատվիայի օրենք: Էջ 52: Հասանելի է՝ https://www.oecd.org/latvia/37117322.pdf
[26] Սեյմը հանդիսանում է Լատվիայի Հանրապետության խորհրդարանը:

համաձայն արարողակարգի: Վերը նշված նվերները համարվում են պետական սեփականություն:

Պաշտոնական պարտականությունները կատարելուց դուրս՝ պետական պաշտոնյաներին **թույլատրվում է նվերներ ընդունել հարազատներից**, ինչպես նաև այն **ֆիզիկական և իրավաբանական անձանցից**, որոնց նկատմամբ պետական պաշտոնյան նվերը ստանալուց **առաջ մեկ տարվա** ընթացքում չի ընդունել որոշում, իրականացրել վերահսկողություն, հսկողություն, (հետա)քննություն կամ նշանակել պատիժ:

Եթե պաշտոնատար անձը, պաշտոնեական պարտականությունները կատարելուց դուրս, **նվերներ է ընդունել ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից**, ապա այդ պաշտոնատար անձը իրավունք չունի ընդունել որոշում, իրականացնել վերահսկողություն, հսկողություն, կամ հետաքննություն, կիրառել պատիժներ (պատժամիջոցներ) նվեր տվողի նկատմամբ:

ՈՒԿՐԱԻՆԱ

Ուկրաինայում պաշտոնատար անձանց նվերների կարգավորումները նախատեսված են Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով[27]: Ըստ հիշյալ օրենքի **«նվեր»** հասկացությունը ունի հետևյալ իմաստը՝ **դրամ կամ այլ գույք, առավելություններ (արտոնություններ), օգուտներ, ծառայություններ, ոչ նյութական ակտիվներ, որոնք տրվում են/ընդունվում են անվճար կամ շուկայական նվազագույն գնից ցածր գնով:**

Օրենքով նախատեսված են նվերներ ստանալու սահմանափակումները: Ըստ այդմ՝ հետևյալ անձանց նկատմամբ տարածվում են **նվերներ ստանալու սահմանափակումները.**

1) պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթներ կատարելու իրավասություն ունեցող անձինք,
2) անձինք, որոնք «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի իմաստով հավասարեցվում են պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթներ կատարելու իրավասություն

[27] Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենք: Հասանելի է՝ https://ips.ligazakon.net/document/T14_1700?an=332

ունեցող անձանց[28] (*այսուհետ՝ Սուբյեկտներ կամ Սուբյեկտ՝ նկատի ունենալով թվարկված Սուբյեկտներից որևէ մեկին*)։

Այս Սուբյեկտներին **արգելվում է** իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից անմիջականորեն կամ այլ անձանց միջոցով՝ **պահանջել, խնդրել կամ ստանալ** նվերներ իրենց կամ մերձավոր անձանց համար՝

1) իրենց կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթների կատարման հետ կապված,
2) կամ եթե նվիրատուն հանդիսանում է իր ենթական։

Վերը նշված Սուբյեկտները **կարող են ընդունել նվերներ**, եթե դրանք իրենց բնույթով համապատասխանում են հյուրընկալության (հյուրասիրության) էությանը, բացառությամբ վերը նշված արգելք նախատեսող դեպքերի, և եթե այդ նվերների արժեքը միանգամյա արժեքը չի գերազանցում աշխատունակ անձին անհրաժեշտ ապրուստի միջոցի կրկնակին (նախատեսված է ուկրաինական օրենսդրությամբ), որը սահմանվել է նվերն ընդունելու օրը, և մեկ անձից (անձանց խմբի) մեկ տարվա ընթացքում ստացված նվերների ընդհանուր արժեքը չի գերազանցում նվերների ընդունման տարվա հունվարի 1-ին սահմանված աշխատունակ անձին անհրաժեշտ ապրուստի միջոցի քառակին։

Վերը նշված նվերների արժեքի սահմանաչափը չի տարածվում այն նվերների վրա, որոնք՝

1) տրվել են հարազատների կողմից,
2) համարվել են հանրության համար նախատեսված զեղչեր ապրանքների, ծառայությունների, հանրային շահումների, մրցանակների, բոնուսների ձեռք բերման համար,
3) ստացվել է որպես գործուղման փոխհատուցում կամ ծախսերի վճարում, եթե այդ փոխհատուցումը կամ վճարումը իրականացվում է պետական կամ տեղական բյուջեի, միջազգային միջկառավարական կազմակերպությունների, միջազգային տեխնիկական աջակցության միջոցների հաշվին, ինչպես նաև այն միջոցառման կազմակերպչից (համակազմակերպչից), որին մասնակցելու նպատակով անձը գործուղվել է։

[28] Տե՛ս մանրամասն Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենք, հոդված 3։

Սուբյեկտների կողմից **ստացված այն նվերները, որոնք տրվել են պետությանը,** Ղրիմի Ինքնավար Հանրապետությանը, համայնքին, պետական կամ համայնքային ձեռնարկություններին, հիմնարկներին կամ կազմակերպություններին, **համապատասխանաբար համարվում են** պետական կամ համայնքային սեփականություն և փոխանցվում են մարմնին, ձեռնարկությանը, հիմնարկին կամ կազմակերպությանը՝ Ուկրաինայի Նախարարների կաբինետի կողմից սահմանված կարգով: Այս մասում նշված կարգավորումը վերաբերում է այն դեպքերին, երբ այդ նվերները նախատեսված են եղել պետության կամ այս հատվածում նշված մյուս կառույցների համար, և Սուբյեկտները՝ որպես պետության կամ այլ կառույցի ներկայացուցիչ, ընդունել են դրանք:

Օրենքում նախատեսված է նաև կարգավորում առ այն, որ այն **որոշումները**, որոնք **ընդունվել են** Սուբյեկտների կողմից **հօգուտ այն անձի, ումից նա կամ նրա մերձավոր ազգականները վերջին երեք տարվա ընթացքում նվեր են ստացել**, համարվում են **ընդունված** իրական շահերի բախման պայմաններում, և նման որոշումների նկատմամբ **կիրառվում են** Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 67-րդ հոդվածի դրույթները, որոնք վերաբերում են **ոչ իրավաչափ ակտերին և անօրինական գործարքներին**:

Մեկ այլ կարգավորման համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթներն կատարելու իրավասություն լիազորություն ունեցող անձինք, նրանց հավասարեցված անձինք այն դեպքում, երբ ստանում են ոչ օրինական առավելության (արտոնության) կամ նվերի առաջարկ, անկախ մասնավոր շահերից, պարտավոր են անհապաղ ձեռնարկել հետևյալ միջոցները

- մերժել առաջարկը,
- հնարավորության դեպքում բացահայտել առաջարկը կատարած անձի ինքնությունը,
- հնարավորության դեպքում ներգրավել վկաներ, այդ թվում՝ աշխատողների կազմից,
- գրավոր կերպով տեղեկացնել առաջարկի մասին անմիջական ղեկավարին (առկայության դեպքում) կամ համապատասխան մարմնի, ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության, հակակոռուպցիոն ոլորտում իրավասու անձանց:

Եթե անձը, ում վրա տարածվում է պաշտոնական դիրքն օգտագործելու և նվերներ ստանալու սահմանափակումները, իր ծառայողական աշխատավայրում հայտնաբերել է կամ ստացել է գույք, որը կարող է դիտարկվել որպես ոչ օրինական օգուտ կամ նվեր, ապա վերջինս պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել այս փաստի մասին՝ իր անմիջական ղեկավարին կամ համապատասխան մարմնի, ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության ղեկավարին: Ոչ օրինական արտոնություն կամ նվեր հանդիսացող գույք հայտնաբերելու դեպքում այդ մասին կազմվում է ակտ, որը ստորագրում են այդ արտոնությունը կամ նվերը հայտնաբերողը և նրա անմիջական ղեկավարը կամ համապատասխան մարմնի, ձեռնարկության, հաստատության կամ կազմակերպության ղեկավարը:

Այն դեպքում, երբ ոչ օրինական արտոնությունը կամ նվերը հայտնաբերվել է մարմնի, ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության ղեկավար հանդիսացող անձի կողմից, ապա ոչ օրինական արտոնություն կամ նվեր հանդիսացող գույքի հայտնաբերման ակտը ստորագրվում է այդ անձի կողմից կամ, նրա բացակայության դեպքում, համապատասխան մարմնի, ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության ղեկավարի պարտականությունները կատարող լիազորված անձի կողմից:

Ապօրինի շահույթի առարկաները, ինչպես նաև ստացված կամ հայտնաբերված նվերները պահվում են մարմնում (կառույցում)՝ մինչև դրա հանձնումը հակակոռուպցիոն ոլորտի իրավասու մարմնին:

Ընդ որում, այն դեպքերում, երբ Սուբյեկտը կասկածներ ունի նվեր ստանալու վերաբերյալ, վերջինս իրավունք ունի այդ հարցի շուրջ խորհրդատվություն ստանալու նպատակով գրավոր կարգով դիմել Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալություն, որը տրամադրում է համապատասխան պարզաբանում:

Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը հանդիսանում է Ուկրաինայի կոռուպցիայի կանխարգելման մարմինը: Ի թիվս այլնի, գործակալության լիազորություններից է՝

- պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթներն կատարելու իրավասություն ունեցող անձանց և նրանց հավասարեցված անձանց գործունեության **էթիկական վարքագծի**, շահերի բախման կանխարգելման և **այդ իրավիճակների լուծման մասին օրենսդրական**

պահանջների կատարման նկատմամբ մշտադիտարկումը և վերահսկումը,

- պետական մարմինների, Ղրիմի Ինքնավար Հանրապետության իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) աշխատողների համար **կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող թեմաներով ուսուցման, վերապատրաստման և խորացված ուսուցման կազմակերպումը** (բացառությամբ քաղաքացիական ծառայողների և ՏԻՄ պաշտոնյաների համար անցկացվող խորացված վերապատրաստումների),
- պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթներն կատարելու իրավասություն ունեցող անձանց և նրանց հավասարեցված անձանց **խորհրդատվական պարզաբանումների**, **մեթոդական և խորհրդատվական աջակցության տրամադրումը՝ էթիկական վարքագծի, շահերի բախման կանխարգելման և լուծման մասին օրենսդրական պահանջների կիրառման**, ինչպես նաև օրենքից բխող այլ հարցերի վերաբերյալ:

ՍԼՈՎԱԿԻԱ

Սլովակիայում հանրային հատվածի համար օրենսդրությունը հատուկ պահանջներ է սահմանել նվերների և հյուրընկալության տրամադրման համար[29]:

Հանրային հատվածում նվերների և հյուրընկալության տրամադրումը կարգավորվում է Պետական պաշտոնյաների գործառույթների իրականացման ընթացքում հանրային շահի պաշտպանության մասին թիվ 357/2004 Coll. Սահմանադրական ակտի համաձայն[30]:

Սլովակիայում, ընդհանուր առմամբ, պետական պաշտոնյային տրվող օգուտի (նվերներ և հյուրասիրություն) սահմանաչափ նախատեսված չէ: Սահմանադրական ակտի

---

[29] Պետական պաշտոնյաների գործառույթների իրականացման ընթացքում հանրային շահի պաշտպանության մասին թիվ 357/2004 Coll. Սահմանադրական ակտ: Հասանելի է՝ https://ceelegalmatters.com/white-collar-crime-2022/white-collar-crime-slovakia-2022

[30] Պետական պաշտոնյաների գործառույթների իրականացման ընթացքում հանրային շահի պաշտպանության մասին թիվ 357/2004 Coll. Սահմանադրական ակտ: Հասանելի է՝ https://europam.eu/data/mechanisms/COI/COI%20Laws/Slovakia/2.%20Law%20No.%20357%20of%202004_SLO.pdf

4-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ պետական պաշտոնյաներին չի թույլատրվում **խնդրել, ընդունել կամ դրդել ուրիշին նվերներ տալ կամ ստանալ այլ օգուտներ**՝ կապված իր պարտականությունների կատարման հետ, բացառությամբ այն նվերները, որոնք սովորաբար տրվում են պաշտոնական պարտականությունների իրականացման ընթացքում:

Որոշակի հանգամանքներում նվերների կամ հյուրասիրության տրամադրումը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության՝ համաձայն Սլովակիայի քրեական օրենսգրքի 328-336-րդ հոդվածների (կաշառք ստանալը, կաշառակերությունը, ընտրական կոռուպցիան, անուղղակի կոռուպցիան, սպորտում դրսևորվող կոռուպցիան, չհիմնավորված առավելություն ստանալը և շնորհելը): Ընդ որում, Սլովակիայի քրեական օրենսգրքի այս դրույթները տարածվում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի վրա:

Թիվ 357/2004 Սահմանադրական ակտի 7-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետի համաձայն՝ պետական պաշտոնյան պարտավոր է տարեկան գրավոր ծանուցմամբ հանդես գալ՝ այնտեղ նշելով նախորդ օրացուցային տարում ստացած նվերի կամ այլ օգուտների (առավելությունների) նկարագրությունը, եթե մեկ աղբյուրից ստացված նվերները, այլ **օգուտները կամ մեկանգամյա նվերի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնապատիկը** *(2022 թվականի դրությամբ այն կազմել է նվազագույն աշխատավարձի տասնապատիկը կազմել է 6,460 եվրո)*: Ծանուցմամբ ներկայացվում է նաև տեղեկատվություն նվերի տեսակի և դրա ընդունման ամսաթվի վերաբերյալ:

Պետական պաշտոնյաները **չեն կարող ընդունել, պահանջել կամ ակնկալել իրենց կամ մեկ այլ անձի համար չհիմնավորված նվեր տալու խոստում**՝ կապված իրենց պաշտոնական պարտականությունների կատարման հետ (Բաժին 131(4), Սլովակիայի քրեական օրենսգրքի 336(c) հոդված), ինչպես նաև **ոչ ոք իրավունք չունի** պետական պաշտոնյային կամ մեկ այլ անձի **տրամադրել, առաջարկել կամ խոստանալ չհիմնավորված նվեր**՝ կապված պետական պաշտոնյայի պաշտոնի կամ գործառույթի հետ (Բաժին 131(4) Սլովակիայի քրեական օրենսգրքի 336(d) հոդված):

Սլովակիայի քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ցանկացած իր (անկախ արժեքից) կարող է կաշառք համարվել, եթե անձը չունի այդ գույքի

(կամ՝ գործողության) ստացման օրինական իրավունք: Ընդգծված է նաև, որ կաշառք տալը կամ ստանալը կարող է հանցագործություն համարվել, երբ այդ կաշառքը տրվում է կամ ստացվում է ինչ-որ ակնկալիքի դիմաց (Սլովակիայի քրեական օրենսգրքի 328-336(b) բաժիններ):

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Միացյալ Թագավորությունում նվերների և հյուրընկալության (հյուրասիրության) հետ կապված կարգավորումները սահմանված են Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի ընդունած նվերների և հյուրընկալության (հյուրասիրության) գրանցամատյանի մասին կարգով, որում թարմացումներ և փոփոխություններ կատարվել են 2022 թվականի հունիսի 29-ին[31]:

Այս փաստաթուղթը հիմնված է «Կաշառակերության դեմ պայքարի մասին» Միացյալ Թագավորության օրենքի վրա, որն ընդունվել է 2010 թվականին: Ի լրումն, քաղաքականությունը հիմնված է նաև Քաղաքացիական ծառայության կանոնագրքի[32], Հանրային ֆինանսների կառավարման[33], Հանրային կյանքի յոթ սկզբունքներ վրա (Nolan Principles – համարվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց էթիկական չափանիշները)[34] և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի[35] հիմնարար սկզբունքների վրա:

Նվերի կամ հյուրասիրության և այլ ծառայությունների **ցանկացած առաջարկ** (օրինակ՝ ճանապարհորդություն, որն առաջարկվում է ծառայության դիմաց), **լինի դա**

---

[31] Միացյալ Թագավորության Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի ընդունած նվերների և հյուրընկալության (հյուրասիրության) գրանցամատյանի մասին կարգ: Վերջին թարմացումները և փոփոխությունները կատարվել են 2022 թվականի հունիսի 29-ին: Հասանելի է՝ https://assets.publishing.service.gov.uk/media/62ceace88fa8f50bfe0edc20/04_RPC_Gifts_and_Hospitality_Register_July_2022.pdf

[32] Միացյալ Թագավորության Քաղաքացիական ծառայության կանոնագիրք: Հասանելի է՝ https://www.gov.uk/government/publications/civil-service-code/the-civil-service-code

[33] Հանրային ֆինանսների կառավարման սկզբունքներ: Հասանելի է՝ https://www.gov.uk/government/publications/managing-public-money

[34] Հանրային կյանքի յոթ սկզբունքներ (Nolan Principles): Հասանելի է https://www.gov.uk/government/publications/the-7-principles-of-public-life

[35] Կորպորատիվ կառավարման կանոնագիրք: Հասանելի է՝ https://www.gov.uk/government/publications/corporate-governance-code-for-central-government-departments

բանավոր, էլեկտրոնային փոստով կամ նամակով առաջարկված, և լինի դա՝ ընդունված, մերժված կամ չստացված, պետք է գրանցվի Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի նվերների և հյուրընկալության մասին ռեեստրում (գրանցամատյանում)՝ 3 օրվա ընթացքում:

Համաձայն Միացյալ Թագավորության կարգավորումների՝ եթե նվերի արժեքը կազմում է 15 ֆունտ ստեռլինգ կամ ավել, ապա այն **գրանցվում է** նվերների և հյուրասիրության գրանցամատյանում: Եթե արժեքը 15 ֆունտից ավել է, սակայն պակաս 50 ֆունտից, ապա **թույլատրվում է** Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող **հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ**, **պահել** նվերը կամ **բաժանել** գործընկերների միջև: Եթե նվերի արժեքը 50 ֆունտ ստեռլինգ կամ ավել, ապա **թույլատրվում է, նախագահի համաձայնությամբ**, **պահել** նվերը կամ **բաժանել** գործընկերների միջև, սակայն 50 ֆունտից ավելի արժեքի դեպքում հարկավոր է **վճարել տարբերությունը:** Նույն կանոնները կիրառվում են օտարերկրյա կառավարություններից, կառավարական կազմակերպություններից կամ միջազգային կազմակերպություններից ստացված նվերների նկատմամբ:

Բացառություններ նվերների ընդունման և հյուրընկալության սկզբունքներից

Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի նախագահը կարող է բացառիկ դեպքերում շեղվել նվերի ընդունման արգելքի սկզբունքներից, եթե հանձնաժողովի անդամները կամ հանձնաժողովի քարտուղարությունը կարող են փաստարկել, որ ստացված նվերը ուղղված է հանձնաժողովի և Միացյալ Թագավորության կառավարության Գործարարության, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչության կարիքները բավարարելուն: Հիշյալի օրինակ կարող են լինել այն դեպքերը, երբ Միացյալ Թագավորություն այցելած օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյան նվեր կամ հյուրասիրություն է առաջարկում, և դրանից հրաժարվելը կվիրավորի նվիրատուին: Նվերի ընդունման վերաբերյալ հանձնաժողովի նախագահի հաստատումը (համաձայնությունը) ստանալու համար **դիմումը ներկայացվում է գրավոր**՝ նվերը առաջարկելուց անմիջապես հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Նվերն ընդունելու որոշման կայացումը

Եթե անձը գործող կարգավորումների համաձայն գտնում է, որ նվերի ընդունումը կգնահատվի որպես անթույլատրելի վարքագիծ, ապա վերջինս քաղաքավարի կերպով մերժում է նվերի, պարգևի կամ օգուտի ընդունումը՝ պարզաբանելով, որ քաղաքացիական ծառայողները չեն կարող նվերներ ստանալ կամ պահել այն, բացառությամբ նվազ արժողությամբ նվերների: Ոչ ընդունելի նվերները սովորաբար վերադարձվում են մերժման մասին գրավոր նամակ կցելով, որում բացատրվում է նվերի վերադարձի մասին հանձնաժողովի ընդունած կարգավորումները: Այն դեպքերում, եթե նվերի ընդունումը կարող է վիրավորել նվիրատուին (հատկապես եթե նվիրատուն արտասահմանյան կառավարություն կամ պետական գործակալություն է), ապա ծառայողը կարող է մտածել առաջարկի կամ նվերի ընդունման ուղղությամբ: Այս պարագայում, նվիրատուին տեղեկացնում եմ, որ նվերն ընդունվել է հանձնաժողովի անունից, այլ ոչ թե անձամբ ծառայողի կողմից: Ամեն դեպքում, եթե ծառայողը որևէ կասկած ունի նվերի ընդունման կամ մերժման վերաբերյալ, ապա հարցը քննարկվում է հանձնաժողովի քարտուղարության կողմից, անհրաժեշտության դեպքում նաև հանձնաժողովի նախագահի հետ, որի վերաբերյալ գրավոր կարգով ներկայացվում խորհրդատվություն:

Եթե ծառայողը ընդունում է 15 ֆունտ ստեռլինգ կամ ավել արժեք ունեցող ցանկացած նվեր, ապա պետք է գրանցի նվերների և հյուրընկալության գրանցամատյանում: Այս կանոնին չհետևելը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն:

Կարգում առանձնահատուկ ուշադրություն է դարձված նաև առևտրային կազմակերպությունների կողմից տրված նվերներին, և այդ կապակցությամբ քաղաքացիական ծառայողներին խորհուրդ է տրվում նվերը ընդունելու պարագայում դիտարկել դրա հնարավոր հետևանքները և ազդեցությունը:

Իրավակարգավորումների համաձայն, եթե ծառայող նվեր է ստացել արտասահմանյան գործուղման ընթացքում, ապա վերջինս հայտարարագրում է Միացյալ Թագավորության հարկային և մաքսային ծառայությունում և ապացուցում է գործուղման կամ պաշտոնական այցի մեջ գտնվելու հանգամանքը:

Հյուրասիրություն

Միացյալ Թագավորությունում հյուրասիրություն ընդունելը, որը կարող է վտանգել ծառայողի անաչառությունը կամ բարեվարքությունը, ևս **չի խրախուսվում**: Այնուամենայնիվ, եթե ծառայողը որոշում է ընդունել հյուրասիրությունը, վերջինս պետք է վստահ լինի, որ այն **տրվում է ողջամիտ հանգամանքներում**: Այս իրավիճակում կասկածներ ունենալու դեպքում, ծառայողները իրավունք ունեն **խորհրդակցել** ավագ կառավարիչներ հետ:

Պարգևներ և մրցանակներ

Օտարերկրյա կազմակերպության կողմից ծառայողական պարտականությունների հետ կապված պարգևի կամ մրցանակի առաջարկ ստանալու պարագայում, ծառայողը քննարկում է դրա ընդունման նպատակահարմարությունը հանձնաժողովի քարտուղարի հետ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև հանձնաժողովի նախագահի հետ:

Որպես կանոն, թույլատրվում է ընդունել և պահել պարգևը կամ մրցանակը, եթե այն՝

- տրվում է անձի հատուկ վաստակը կամ ձեռքբերումը մատնանշելու նպատակով,
- չի համարվում կամ նման չէ նվերի, նվերի տրամադրման դրդման կամ վճարման, որի դեպքում այլ վարքագծային կանոններ են կիրառվում:

Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովը (Regulatory policy committee)

Միացյալ Թագավորությունում այս կառույցն է հանդիսանում նվերների կամ հյուրընկալության (հյուրասիրության) հետ կապված ծախսերի գրանցումն իրականացնող և վերահսկող մարմինը: Այն անկախ մարմին է, որը ֆինանսավորվում է Միացյալ Թագավորության Բիզնեսի և առևտրի դեպարտամենտի կողմից[36]: Հանձնաժողովը կազմված է մի շարք ոլորտների անկախ փորձագետներից, ներառյալ՝ մասնավոր և կամավոր ոլորտները, բիզնեսը, իրավաբանական և ակադեմիական հանրույթը[37]: Հանձնաժողովի անդամները նշանակվում են բաց մրցույթի արդյունքներով, որը

[36] Միացյալ Թագավորության Բիզնեսի և առևտրի դեպարտամենտի վեբ կայք՝ https://www.gov.uk/government/organisations/department-for-business-and-trade
[37] https://www.gov.uk/government/organisations/regulatory-policy-committee/about

կազմակերպվում է Հանրային նշանակումների մասին կառավարման կանոնագրքին համապատասխան[38]: Հանձնաժողովին նաև է աջակցում է քաղաքացիական ծառայողների քարտուղարությունը, որը կազմված է տնտեսագետներից, քաղաքականության խորհրդատուներից և հետազոտողներից:

[38] Հանրային նշանակումների մասին կառավարման կանոնագիրք: Հասանելի է՝ https://www.gov.uk/government/publications/governance-code-for-public-appointments

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՆՎԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարը իրականացվում է երեք հիմնասյուներով՝ կոռուպցիայի կանխարգելում, կոռուպցիայի հակազդում և հակակոռուպցիոն կրթություն: Կոռուպցիայի կանխարգելման հիմնական կարևորագույն ինստիտուտներից է բարեվարքության համակարգը, որի ամբողջական և արդյունավետ կիրառումը ենթադրում է դրա պարբերաբար զարգացում: Իր հերթին, բարեվարքության համակարգը կառուցված է մի քանի տարրերի վրա, որոնցից է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների ընդունելու սահմանափակումներին առնչվող օրենսդրական կարգավորումները[39]: Այս ուղղությամբ, թեև Կառավարությունը շարունակական աշխատանքներ է իրականացրել վերջին տարիներին, որոնց արդյունքում բարելավվել են նվերների ինստիտուտը, այդուհանդերձ, դեռևս առկա են որոշ խնդիրներ և բացեր:

Այսպես, 2022 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխությունների արդյունքում կատարելագործվել են շահերի բախման, անհամատեղելիության պահանջների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները, օրենսդրական մակարդակում կարգավորվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված հիմնահարցերը: Թույլատրելի նվերի արժեք է սահմանվել վաթսուն հազար ՀՀ դրամը: Սրան զուգահեռ, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում նվերներ ընդունելու սահմանափակումների իրացման կառուցակարգերը ամբողջությամբ ամրապնդված չեն, նվերների հաշվառման կառուցակարգերը թերի են, դեռևս ձևավորված չէ նվերների ռեեստրը, ինչը խնդրահարույց է և իրավակիրառ պրակտիկայում մի շարք խնդիրներ կարող է առաջացնել:

---

[39] Տե՛ս «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՀ ՀՕ-206-Ն օրենք: Հոդված 21: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189406

Այս բացթողումների լուծման և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների **պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված** նվերների ինստիտուտի շարունակական կատարելագործման նպատակով մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերում ներառվել են գործողություններ և հանձնառություն:

Մասնավորապես, **Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան (ԲԿԳ) նախաձեռնության շրջանակներում ՀՀ 2022-2024 թվականների գործողությունների ծրագրում** ներառված է 10 հանձնառություն, որոնք խմբավորված են ըստ ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթ ուղղությունների: «Իրավունք և արդարություն» առաջնահերթ ուղղության 6 ենթաուղղություններից մեկը նվիրված է «Կոռուպցիայի դեմ պայքար՝ կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ» ոլորտին, որի բաղադրիչը ներառում է, երկու հանձնառություն: Հանձնառություններից թվով յոթերորդը վերաբերում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստրին[40]:

Հանձնառության կարճ նկարագիրը: Բարեվարքության համակարգի բաղադրիչ հանդիսացող նվերների ինստիտուտի կարգավորման նպատակով հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանում, ինչպես նաև նվերների հաշվառման և հանձնման կարգի առնչությամբ անհրաժեշտ կարգավորումների նախատեսում, մասնավորապես՝ նվերների հայտարարագրման թվայնացված ռեեստրի ստեղծում, որը կապահովի նվերների հայտարարագրման, դրանց գնահատման, ինչպես նաև տեղեկատվության հրապարակման ավտոմատացված լուծումներ:

Հանձնառությամբ ակնկալվող արդյունքները: Ի թիվս այլնի, ակնկալվում է իրականացնել հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պաշտոնեական լիազորությունների կատարման ընթացքում ստացած նվերների վերահսկողություն, ինչպես նաև սահմանել կենտրոնական մարմնին, որը կիրականացնի պատշաճ և միասնական քաղաքականություն նվերների ընդունման արգելքի իրավական նորմերի կիրառման ոլորտում: Ապահովել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվեր ընդունելու արգելքի վերաբերյալ սահմանափակում

[40] Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան նախաձեռնության շրջանակներում ՀՀ 2022-2024 թվականների գործողությունների ծրագիր: Հասանելի է՝ https://ogp.gov.am/hy/commitments/33

նախատեսող իրավակարգավորումների միասնականություն՝ դրանք զետեղելով միայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում և տարածելով հանրային ծառայության բոլոր ոլորտների և տեսակների վրա։ Սահմանել օրենսդրական առավել հստակ և հասցեական կարգավորումներ, որոնք թույլ կտան կոռուպցիոն ռիսկերի պատշաճ զսպում իրականացնել։ ԿԿՀ-ը քննելու և լուծելու է նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների վերաբերյալ գործեր, նվերներին առնչվող օրենսդրական ակտերի պահանջների չպահպանման դեպքում կիրառելու է պատասխանատվության միջոցներ։

ՀՀ կառավարությունը 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատել է **ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը** (այսուհետ՝ Ռազմավարություն)[41]։ Ռազմավարության Նպատակ 1-ը վերաբերում է Կոռուպցիայի կանխարգելմանը և բարեվարքության համակարգերի ամրապնդմանը, որի ներքո նախատեսված ռազմավարական ուղղություններից է բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործումը։ Ըստ այդմ, համապատասխան գործողություններ նախատեսված են նաև Ռազմավարության գործողությունների ծրագրում, որոնք վերաբերում են նվերների ինստիտուտի զարգացմանը, այդ թվում նաև՝ նվերների ընդունման սահմանափակումների իրացման կառուցակարգերի զարգացումը։

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված արգելված նվերների կարգավորումների ուղղությամբ իրականացված գործողությունները

«Հանրային ծառայության մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները։ Հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***«նվեր»*** *հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, այդ թվում՝ ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ*

[41] ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշում, որով հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը։ Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674

անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, դրամական միջոցները (կանխիկ, անկանխիկ կամ որևէ այլ ձևով արտահայտված), կրիպտոարժույթը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն, և որը տրամադրվում է պայմանավորված անձի (այդ թվում՝ նաև փոխկապակցված անձի) պաշտոն զբաղեցնելու հանգամանքով»:

Նույն հոդվածի իմաստով՝ ***«հյուրասիրություն» է*** *համարվում այն նվերը, որն առաջարկվել, տրվել կամ ստացվել է պաշտոնական հարաբերություններ սկսելու, դրանք ամրապնդելու կամ զարգացնելու նպատակով: Այն ընդգրկում է, բայց չի սահմանափակվում ընդունելության, ժամանցային, սոցիալական կամ սպորտային միջոցառումների հրավերներով և առաջարկներով:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետևյալ նվերները.*

1) *պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.*
2) *ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.*
3) *կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.*
4) *օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:*

Այսպիսով, «Հանրային ծառայության մասին» օրենքի շրջանակներում, որպես այդպիսին, **նվերների առանձնացված կատեգորիաներ, ինչպիսիք են օրինակ՝ անհատական նվերները, ներկայացուցչական կամ արարողակարգային նվերները,** նախատեսված չէ: Թույլատրող նվերների շրջանակներում նախատեսված է օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները, սակայն միևնույն ժամանակ այդ արարողակարգային նվերի հասկացությունը հստակեցված չէ օրենքով: Ի տարբերություն միջազգային փորձի, Հայաստանում օրենքի շրջանակներից դուրս է մնացել նաև հանրային պաշտոն զբաղեցնող

անձին կամ հանրային ծառայողին տրվող **պարգևների և խրախուսանքի այլ միջոցների կարգավորումը**, այդ թվում՝ **օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվողները**:

Վերը նշված օրենսդրական բացերից մի քանիսին ՀՀ արդարադատության նախարարությունը անդրադարձ է կատարել՝ ներառելով դրանք ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, որն ընդունվել է 2023 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) կողմից առաջին ընթերցմամբ[42]:

Այսպես, նախագծով նախատեսված է օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել այն կարգավորումը, ըստ որի նվեր չեն համարվում ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը: Այսինքն, օրենքի ընդունումից հետո, ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը դիտարկվելու են ոչ թե թույլատրելի նվերներ, որոնք պետք է բավարարեն օրենքի չափանիշներին, այդ թվում լինեն սահմանված շեմի շրջանակներում և հաշվառվեն նվերների ռեեստրում, այլ դրանք ուղղակի չեն դիտարկվի նվեր՝ բացառության կարգով: Միևնույն ժամանակ, *«ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը»* ձևակերպումը նույնպես խնդրահարույց է, և պարզ չէ՝ արդյո՞ք **նյութեր** ասվածը իր մեջ **ներառում է գրասենյակային գույք, կապի միջոցներ, տեխնիկական սարքավորումներ, թե՞ միայն փաստաթղթեր, ուսումնական նյութեր**:

Նախագծով նախատեսված է նաև փոփոխել 29-րդ հոդվածի 4-րդ մասը, որը վերաբերում է թույլատրվող նվերների շրջանակին: Մասնավորապես՝ *«4. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետևյալ նվերները.*

1) *պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը,*

---

[42] ՀՀ ԱԺ-ի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տարբերակ: Հասանելի է՝ http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14485&Reading=1
Նախագծի երկրորդ ընթերցման տարբերակը հասանելի է՝
http://www.parliament.am/draftreading_docs8/K-687-1_DR2.pdf

2) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով,

3) օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները,

4) օրենքով սահմանված դեպքերում որպես պարգևատրում, պետական պարգև կամ խրախուսանքի միջոց տրամադրվող գույքը, այդ թվում՝ Վարչապետի կողմից որպես պարգևատրում տրվող զենքը։»։

Նախագծի ընդունման արդյունքում թույլատրելի նվերների շրջանակից դուրս է գալիս *«ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը»* ձևակերպումը, և ինչպես նշվեց վերևում՝ նվերի այս դասակարգումը ընդունվող նախագծով չի համարվելու նվեր։

Նախագծով կարգավորվելու է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին տրված *պետական պարգև կամ խրախուսանքի միջոց տրամադրվող գույքը, այդ թվում՝ Վարչապետի կողմից որպես պարգևատրում տրվող զենքը*։ Սակայն, այս կարգավորմամբ նախատեսված չէ այն պարգևների կամ խրախուսանքի միջոց հանդիսացող գույքի տնօրինման կարգը, եթե դրանց տրամադրվել են *օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից։*

Համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսված են «Պետական արարողակարգի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-291-Ն օրենքում[43] և «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքում[44]։

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող նվերների ինստիտուտի հետ կապված տարբեր ասպեկտների կարգավորման վերաբերյալ ԿԿՀ-ը 2024 թվականի

---

[43] «Պետական արարողակարգի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-291-Ն օրենքում լրացում կատարելու մասին նախագիծ։ Հասանելի է՝
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14486&Reading=1
http://www.parliament.am/draft_history.php?id=14486

[44] «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ։ Հասանելի է՝
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14485&Reading=1
http://www.parliament.am/draft_history.php?id=14485

փետրվարի 6-ի թիվ 02-Ն որոշմամբ սահմանել է Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը[45], իսկ 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 01-Ն որոշմամբ սահմանել է Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները[46]: Այնուհետև, 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ԿԿՀ-ի թիվ 01-Ն որոշմամբ սահմանվեց հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը[47]:

Նվերներ **ընդունելու** կամ հաշվառելու սահմանված կարգը խախտելու համար փոփոխություններ կատարվեցին ՎԻՎՕ-ում, որով սահմանվեցին **վարչական պատասխանատվության միջոցներ** (հոդված 166.1): Փոփոխությունները ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարից: Ըստ այդմ, հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով

---

[45] ԿԿՀ-ի 2024 թվականի փետրվարի 6-ի թիվ 02-Ն որոշումը Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, ԲԴԽ-ի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189669

[46] ԿԿՀ-ի 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 01-Ն որոշումը Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններ հաստատելու մասին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164523

[47] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 01-Ն որոշումը՝ Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը հաստատելու մասին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188181

թույլատրելի չհամարվող նվերներ ընդունելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ **առաջացնում է տուգանքի նշանակում**՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով՝ **նվեր ստացված առարկայի բռնագրավմամբ**, կամ նվեր ստացված առարկայի **բռնագրավման անհնարինության** դեպքում՝ **տուգանքի նշանակում նվերի**՝ ընդունման պահին գործող արժեքի հնգապատիկի չափով:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանման ուղղությամբ իրականացված գործողությունները

02.01.2023 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-540-Ն օրենքով «Հանրային ծառայության մասին» օրենքում[48] և հարակից օրենքներում կատարված փոփոխություններով **ԿԿՀ-ին վերապահվեց նվերների ընդունման սահմանափակումների նկատմամբ հսկողության գործառույթը**:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում կանխարգելիչ գործառույթների իրականացումը վերապահված է ԿԿՀ-ին: Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որը ԿԿՀ-ն ունի մասնագիտացված աշխատակազմ, ձևավորված կարողություններ և փորձ՝ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում, ինչպես նաև նկատի ունենալով պետության քաղաքականությունը, ըստ որի բարեվարքության համակարգի գործարկումն ու դրա նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ԿԿՀ-ն, ուստի հիմնավորված է ԿԿՀ-ին *հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմին սահմանելու մասին օրինագծի ընդունումը:*

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ պետական մարմինների և ՏԻՄ-երի անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում նշանակված բարեվարքության

[48] «Հանրային ծառայության մասին օրենքում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենք: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172230

հարցերով կազմակերպիչները այս հարցում կարևոր գործառույթ ունեն «օժանդակելու» ԿԿՀ-ին՝ տեղեկություններ տրամադրելով նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև հանրային ծառայողներին տրամադրելով իրենց պաշտոնական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ նվերների ստացման իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք: Այսինքն, այս տեսանկյունից, բարեվարքության հարցերով կազմակերպիչները կարևոր օղակ են հանդիսանում հանրային ծառայողի և ԿԿՀ-ի միջև՝ նվերների ընդունման սահմանափակումների վերաբերյալ միասնական պրակտիկան ապահովելու համար:

Կատարված փոփոխությունների լույսի ներքո «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը սահմանում են.

- *«9. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողն ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա հանրային ծառայողը սահմանված կարգով անմիջապես, սակայն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, դատախազը, քննիչը՝ համապատասխան մարմնում գործող էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե նվերը, բարեվարքության հարցերով կազմակերպչի, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն, հանդիսանում է սույն հոդվածի իմաստով թույլատրելի չհամարվող, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է ապահովել, որ ստացված նվերը վերադարձվի, կամ վճարվի դրան համարժեք հատուցում խորհրդատվական կարծիքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը*

կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել պետությանը կամ համայնքին:

- *10. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին հայտնի է դառնում, որ իր ընտանիքի անդամները կամ իր հետ փոխկապակցված անձինք ստացել են նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա այդ մասին իրեն հայտնի դառնալուց հետո անմիջապես, սակայն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հանրային ծառայողը սահմանված կարգով հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, քննիչը, դատախազը՝ էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե նվերը, բարեվարքության հարցերով կազմակերպչի, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն, հանդիսանում է սույն հոդվածի իմաստով արգելված նվեր, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է միջոցներ ձեռնարկել, որ ստացված նվերը վերադարձվի, կամ վճարվի դրան համարժեք հատուցում խորհրդատվական կարծիքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում»:*

Ինչ վերաբերում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման կարգը խախտելու համար նախատեսված վարչական պատասխանատվության կիրառմանը, ապա այս **խախտումների կապակցությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների իրականացման իրավասությունը նույնպես վերապահվել է ԿԿՀ-ին**:

Վերը նշվածի կապակցությամբ, ուսումնասիրելով 2023 թվականի ԿԿՀ-ի հաղորդումները, պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակահատվածում ԿԿՀ-ի կողմից

նվերների ընդունման սահմանափակումների մասով հարուցվել է երեք վարույթ՝ ՎԻՎՕ 166.1-րդ հոդված 1-ին մասով նախատեսված, այն է՝ նվերներ ընդունելու սահմանափակումների խախտման հիմքով[49]: Երեք գործերով էլ ԿԿՀ-ն հայտնաբերել է թույլատրելի չհամարվող նվերներ ընդունելու կարգի խախտում, կիրառել է վարչական տույժ և համարել լուծված նվեր ստացված գույքի բռնագրավման հարցը:

[49] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի երկրորդ կիսամյակի հաղորդում: Հասանելի է՝ http://cpcarmenia.am/files/legislation/1253.pdf
Վարչական տույժեր նշանակելու մասին ԿԿՀ-ի որոշումները հասանելի են՝ http://cpcarmenia.am/files/legislation/1086.pdf , http://cpcarmenia.am/files/legislation/1087.pdf , http://cpcarmenia.am/files/legislation/1085.pdf

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժնում ներկայացված եզրակացությունները հիմնված են միջազգային ստանդարտների ու միջազգային փորձի, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանման վերաբերյալ իրավակարգավորումների օրենսդրության և առկա պրակտիկայի վերլուծության վրա։

Ա) Արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի իրավասությունների վերաբերյալ եզրակացություններ

1. ԳՐԵԿՈ ստանդարտներից մեկը վերաբերում է նշյալին՝ *i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով* ***հստակ ուղղորդում կապահովվի*** *շահերի բախման և հարակից ոլորտներին, մասնավորապես՝* ***նվերների և այլ առավելությունների ընդունմանը,*** *(…):*

   Այսպես, պատգամավորների վարքագծի կանոնագիրքը, որը կներառեր համապատասխան ուղեցույցներ շահերի բախման և բարեվարքության *(որը ընդգրկում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կարգավորումներ)* վերաբերյալ, **դեռևս առկա չէ**։

2. *ԳՐԵԿՈ-ի մեկ այլ ստանդարտով առաջարկվում է պատգամավորների կողմից էթիկայի և վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգը զգալիորեն ամրապնդել՝ ապահովելու համար՝ i) էթիկայի կանոնների և անհամատեղելիության դեպքերի ու լրացուցիչ գործունեության, շահերի բախման և* ***նվերների ընդունման*** *վերաբերյալ կանոնների* ***անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողությունը****, ii) համապատասխան* ***պատասխանատվության ենթարկելու միջոցով կանոնների կատարումը****:*

Այսպես, նվերների ընդունման վերաբերյալ անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողություն ապահովելու նպատակով 02.01.2023 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-540-Ն օրենքով «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում կատարված փոփոխություններով **ԿԿՀ-ին վերապահվել է նվերների ընդունման սահմանափակումների նկատմամբ հսկողության գործառույթը**:

ՎԻՎՕ-ում կատարված փոփոխությունների ուժով **նվերներ ընդունելու** կամ հաշվառելու սահմանված կարգը խախտելու համար **սահմանվել են վարչական պատասխանատվության միջոցներ** հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար:

3. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է մշակել պատգամավորների, դատավորների և դատախազների կողմից **նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ**, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի **հստակ սահմանումներ**, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում՝ նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերների մասին:*

Այսպես «Հանրային ծառայության մասին» օրենքի շրջանակներում, որպես այդպիսին, **նվերների առանձնացված այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են՝ անհատական նվերները, ներկայացուցչական կամ դիվանագիտական կամ արարողակարգային նվերները,** նախատեսված չեն, հասկացությունները տրված չեն: Թույլատրող նվերների շրջանակներում նախատեսված է օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները, սակայն միևնույն ժամանակ այդ արարողակարգային նվերի հասկացությունը հստակեցված չէ օրենքով: Ի տարբերություն միջազգային փորձի, Հայաստանում օրենքի շրջանակներից դուրս է մնացել նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրայն ծառայողին տրվող **պարգևների և խրախուսանքի այլ միջոցների**

կարգավորումը, այդ թվում՝ **օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվողները**։

««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, որն ընդունվել է 2023 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) կողմից առաջին ընթերցմամբ, նախատեսված է օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել այն կարգավորումը, ըստ որի նվեր չեն համարվում ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը։ Այսինքն, օրենքի ընդունումից հետո, ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը դիտարկվելու են ոչ թե թույլատրելի նվերներ, որոնք պետք է բավարարեն օրենքի չափանիշներին, այդ թվում լինեն սահմանված շեմի շրջանակներում և հաշվառվեն նվերների ռեեստրում, այլ դրանք ուղղակի չեն դիտարկվի նվեր՝ բացառության կարգով։ Միևնույն ժամանակ, *«ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը»* ձևակերպումը նույնպես խնդրահարույց է, և պարզ չէ՝ արդյո՞ք **նյութեր** ասվածը իր մեջ **ներառում է գրասենյակային գույք, կապի միջոցներ, տեխնիկական սարքավորումներ, թե՞ միայն փաստաթղթեր, ուսումնական նյութեր**։

Նախագծով նախատեսված է նաև փոփոխել թույլատրվող նվերների շրջանակը և դրա ընդունման արդյունքում թույլատրելի նվերների շրջանակից դուրս է գալիս *«ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը»* ձևակերպումը, և նվերի այս դասակարգումը ընդունվող նախագծով չի համարվելու նվեր։

Նախագծով կարգավորվելու է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին տրված *պետական պարգև կամ խրախուսանքի միջոց տրամադրվող գույքը, այդ թվում՝ Վարչապետի կողմից որպես պարգևատրում տրվող զենքը*։ Սակայն, այս կարգավորմամբ նախատեսված չէ այն պարգևների կամ խրախուսանքի միջոց հանդիսացող գույքի տնօրինման կարգը, եթե դրանց տրամադրվել են *օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից։*

4. *Միջազգային փորձում նվերների սահմանափակման շրջանակներում ներդրված են տարբեր կարգավորումներ: Օրինակ՝ Ուկրաինայում այն* ***որոշումները****, որոնք* ***ընդունվել են*** *հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողների կողմից* ***հօգուտ այն անձի, ումից նա կամ նրա մերձավոր ազգականները վերջին երեք տարվա ընթացքում նվեր են ստացել****, համարվում են* ***ընդունված*** *իրական շահերի բախման պայմաններում: Լատվիայում պաշտոնական պարտականությունները կատարելուց դուրս՝ պետական պաշտոնյաներին* ***թույլատրվում է նվերներ ընդունել հարազատներից****, ինչպես նաև այն* ***ֆիզիկական և իրավաբանական անձանցից****, որոնց նկատմամբ պետական պաշտոնյան նվերը ստանալուց* ***առաջ մեկ տարվա*** *ընթացքում չի ընդունել որոշում, իրականացրել վերահսկողություն, հսկողություն, (հետա)քննություն կամ նշանակել պատիժ: Իսկ եթե պաշտոնատար անձը, պաշտոնեական պարտականությունները կատարելուց դուրս,* ***նվերներ է ընդունել ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից****, ապա այդ պաշտոնատար անձը իրավունք չունի ընդունել որոշում, իրականացնել վերահսկողություն, հսկողություն, կամ հետաքննություն, կիրառել պատիժներ (պատժամիջոցներ) նվեր տվողի նկատմամբ:*

ՀՀ-ում նվերների սահմանափակման շրջանակներում նման կարգավորումներ նախատեսված չեն:

5. *Մոլդովայում այն հանրային ծառայողների գործունեությունը, որոնք ստացել են անթույլատրելի նվերներ, վերադասի կողմից լրացուցիչ վերահսկողության են ենթարկվում՝ հիմքով ունենալով այն կանխավարկածը, որ եթե նրանց առաջարկվել է անթույլատրելի նվեր, պատճառներից մեկը կարող է լինել իրենց ծառայողական պարտականություններում թերացումը, ոչ պատշաճ կատարումը: Լրացուցիչ վերահսկողություն իրականացնելու ուղղակի պարտականությունը դրված է այն մարմնի ղեկավարի վրա, որտեղ աշխատում է հանրային ծառայողը:*

ՀՀ-ում նման կարգավորում և/կամ պրակտիկան առկա չէ:

6. *Միջազգային փորձի համաձայն, եթե հանրային ծառայողը օտարերկրյա կազմակերպության կողմից ծառայողական պարտականությունների հետ կապված ստացել է* ***պարգևի կամ մրցանակի առաջարկ, ծառայողը քննարկում է դրա ընդունման նպատակահարմարությունը իրավասու մարմնի պաշտոնյայի հետ:*** *Որպես կանոն,* ***թույլատրվում է ընդունել և պահել պարգևը կամ մրցանակը,*** *եթե այն (ա) տրվում է անձի հատուկ վաստակը կամ ձեռքբերումը մատնանշելու նպատակով, (բ) չի համարվում կամ նման չէ նվերի, նվերի տրամադրման դրդման կամ վճարման, որի դեպքում այլ վարքագծային կանոններ են կիրառվում: Համանման կարգավորում նախատեսված է օրինակ՝ Մեծ Բրիտանիայում:*

««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, որն ընդունվել է 2023 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) կողմից առաջին ընթերցմամբ, նախատեսված է կարգավորել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին տրված **պետական պարգև կամ խրախուսանքի միջոց տրամադրվող գույքը, այդ թվում՝ Վարչապետի կողմից որպես պարգևատրում տրվող զենքը:** Սակայն, այս կարգավորմամբ նախատեսված չէ այն պարգևների կամ խրախուսանքի միջոց հանդիսացող գույքի **ընդունման և տնօրինման կարգը**, եթե դրանց տրամադրվել են **օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից:**

7. *Միջազգային փորձին (օրինակ՝ Ուկրաինա, Մոլդովա) հայտնի են կարգավորումներ այն դեպքերի համար, եթե անձը, ում վրա տարածվում է նվերներ ստանալու սահմանափակումները, իր ծառայողական աշխատավայրում հայտնաբերել է կամ ստացել է գույք, որը կարող է դիտարկվել որպես ոչ օրինական օգուտ կամ նվեր: Այս դեպքում վերջինս պարտավոր է անհապաղ տեղեկացնել այս փաստի մասին՝ իր անմիջական ղեկավարին կամ համապատասխան մարմնի, ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության ղեկավարին: Ոչ օրինական արտոնություն կամ նվեր հանդիսացող գույք հայտնաբերելու դեպքում այդ մասին կազմվում է*

ակտ, որը ստորագրում են այդ արտոնությունը կամ նվերը հայտնաբերողը և նրա անմիջական ղեկավարը կամ համապատասխան մարմնի, ձեռնարկության, հաստատության կամ կազմակերպության ղեկավարը: Կարգավորված են նաև ահն գործողությունների շրջանակը, որ պետք է ձեռնարկի նվերը հայտնաբերած հանրային ծառայողը:

ՀՀ-ում նվերների հայտնաբերման մասով օրենքի կամ ենթաօրենսդրական ակտերի մակարդակով կարգավորումներ նախատեսված չեն:

8. *Միջազգային փորձի համաձայն՝ տարբեր երկրներում գործում են նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմինների տարբեր մոդելներ: Ըստ այդմ, տարբերակվում է երկու մոդել. առաջինի դեպքում պետական մարմիններում ստեղծված են այդ մարմինների հանրային ծառայողների համար հատուկ ստորաբաժանումներ կամ նշանակված են պատասխանատու անձինք (օրինակ՝ Մոլդովա): Երկրորդի դեպքում գործում է մեկ միասնական մարմին, միաժամանակ չբացառելով պետական մարմիններում պատասխանատու անձանց ինստիտուտը (օրինակ՝ Ուկրաինա, Միացյալ Թագավորություն):*

ՀՀ-ում ԿԿՀ-ին է վերապահված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի պահպանման իրավասությունը: Միաժամանակ հարկ է նշել, որ պետական մարմինների և ՏԻՄ-երի անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում նշանակված բարեվարքության հարցերով կազմակերպիչները այս հարցում կարևոր գործառույթ ունեն «օժանդակելու» ԿԿՀ-ին՝ տեղեկություններ տրամադրելով նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև հանրային ծառայողներին տրամադրելով իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ նվերների ստացման իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք:

Բ) Արգելված նվերների իրավակարգավորումների վերաբերյալ վերապատրաստումների և հանրային իրազեկման վերաբերյալ եզրակացություններ

9. ԳՐԵԿՈ ստանդարտներից մեկը վերաբերում է նշյալին՝ *ii) պատգամավորների վարքագծի կանոնագիրքը լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝* ***մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն և իրազեկվածության մակարդակի բարձրացում:***

   Այսպես, ուսումնասիրելով տարբեր բաց աղբյուրներում առկա տվյալները, ՀՀ ԱԺ-ի և ԲԴԽ-ի կայքէջերը և հաղորդագրությունները, ԿԿՀ-ի 2023 թվականի հաղորդումները, ինչպես նաև 2024 թվականի առաջին եռամսյակի գործունեությունը, պարզ է դառնում, որ նվերների՝ որպես վարքագծի կանոնի մաս, **համակարգված և խորացված ուսուցում** պատգամավորների, դատավորների, հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց և հանրային ծառայողների համար **չեն ներդրվել**:

   Հիշյալը չի վերաբերում տարբեր խմբերի համար նախատեսված պարտադիր վերապատրաստումների մաս կազմող ստանդարտ ուսուցումներին:

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանման վերաբերյալ մի կողմից, միջազգային ստանդարտների, մասնավորապես՝ ՏՁՀԿ-ի և ԳՐԵԿՈ-ի, միջազգային փորձի, այդ թվում՝ ԱլԳ երկրների, մյուս կողմից, ներպետական օրենսդրության և պրակտիկայի վերլուծությունը՝ առաջարկվում է ՀՀ-ում կատարելագործել արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի իրավասությունների իրավակարգավորումները՝ ըստ ներքոշարադրված առաջարկությունների։

Ա) Արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանման իրավասությունների վերաբերյալ առաջարկություններ

1. Մշակել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և դրանում նախատեսել նվերների ընդունման կանոնների, արգելված նվերների վերաբերյալ կարգավորումները։

2. Վերանայել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը և նախատեսել նվերների առանձնացված այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են՝ ներկայացուցչական կամ արարողակարգային նվերները՝ սահմանելով դրա հստակ հասկացությունները։

3. Ենթաօրենսդրական ակտերի շրջանակներում կամ նվերների ինստիտուտի վերաբերյալ առկա կամ առաջիկայում մշակվող ուղեցույցներում կամ վարքագծի կանոններում (կանոնագրքերում) պարզաբանել «ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը» ձևակերպումը և հստակեցնել՝ արդյո՞ք նյութեր ասվածը իր մեջ ներառում է գրասենյակային գույք, կապի միջոցներ, տեխնիկական սարքավորումներ, թե՞ միայն փաստաթղթեր, ուսումնական նյութեր։

4. Վերանայել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը և նախատեսել այն պարգևների կամ խրախուսանքի միջոց հանդիսացող գույքերի ընդունման և տնօրինման կարգը, որոնք տրամադրվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին կամ նրանց հետ փոխկապակցված անձանց՝ օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ վերը նշյալների հետ փոխկապակցված այլ անձանց կողմից:

5. Վերանայել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը և նախատեսել որոշակի սահմանափակումներ, ըստ որի՝ եթե հանրային ծառայողը կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձը իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում կայացրել է որոշում կամ կատարել է բարենպաստ գործողություններ հօգուտ այն անձի, ումից նա կամ նրա հետ փոխկապակցված անձը վերջին մեկ տարվա ընթացքում նվեր է ստացել, այդ որոշումները կամ կատարված գործողությունները համարվում են ընդունված/կատարված շահերի բախման պայմաններում:

6. Վերանայել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը և նախատեսել որոշակի սահմանափակումներ, ըստ որի՝ հանրային ծառայողին կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձին պաշտոնական պարտականությունները կատարելուց դուրս արգելված է նվեր ընդունել այն ֆիզիկական և իրավաբանական անձանցից, որոնց նկատմամբ պաշտոնյան (ծառայողը) նվերը ստանալուն նախորդող մեկ տարվա ընթացքում ընդունել է որոշում, իրականացրել է վերահսկողություն, հսկողություն, (հետա)քննություն կամ նշանակել պատիժ:
   Նախատեսել սահմանափակում նաև այն դեպքերի համար, երբ պաշտոնյան (ծառայողը) պաշտոնեական պարտականությունները կատարելուց դուրս, նվերներ է ընդունել ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից, ապա այդ պաշտոնյան (ծառայողը) իրավունք չունի ընդունել որոշում, իրականացնել վերահսկողություն, հսկողություն, կամ հետաքննություն, կիրառել պատիժներ (պատժամիջոցներ) նվեր տվողի նկատմամբ:

7. Քննարկել հանրային ծառայողի գործունեության նկատմամբ վերադաս մարմնի/անձի կողմից լրացուցիչ վերահսկողություն իրականացնելու հնարավորության նպատակահարմարությունը այն դեպքերում, եթե հանրային ծառայողը ստացել է կամ նրան փորձել են նվիրել արգելված նվեր:

Բ) Արգելված նվերների իրավակարգավորումների վերաբերյալ վերապատրաստումների և հանրային իրազեկման վերաբերյալ առաջարկություններ

8. Պատգամավորների վարքագծի կանոնագիրքը ընդունելուց հետո, իրականացնել դրա վերաբերյալ համակարգված և խորացված ուսուցում: Համանման ուսուցումներ նախատեսել նաև դատավորների, հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց և հանրային ծառայողների համար:
   Հիշյալը չի վերաբերում տարբեր խմբերի համար նախատեսված պարտադիր վերապատրաստումների մաս կազմող ստանդարտ ուսուցումներին:

9. Կազմակերպել վերապատրաստումներ **հանրային ծառայության բոլոր մակարդակներում**՝ շեշտադրումը դնելով նաև նվերների ինստիտուտի վերաբերյալ գործնական խնդիրների (իրավիճակների) լուծմանը, **իրականացնել իրազեկումներ** ինչպես գործող կարգավորումներին, այնպես էլ առաջիկայում նախատեսվող փոփոխությունների և լրացումներ մասով, և **չսահմանափակվել** միայն իրազեկման թերթիկներ կամ տեղեկատվական բրոշյուրներ ուղարկելով, կամ **սահմանափակ թվով** մարդկանց վերապատրաստելով (օրինակ՝ չսահմանափակվել միայն բարեվարքության հարցերով կազմակերպիչներին վերապատրաստելով՝ ուսուցանողների ուսուցման ձևաչափով):